

Կ-169-03.06.2019-ՊԱ-011

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՐՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածում՝

1) «ավտոմոբիլ» հասկացության առաջին նախադասությունը «մեխանիկական տրանսպորտային միջոց» բառերից հետո լրացնել «(թեթև մարդատար ավտոմոբիլ, ավտոբուս, բեռնատար ավտոմոբիլ, բեռնաուղեւորատար ավտոմոբիլ, հատուկ ավտոմոբիլ, էլեկտրամոբիլ)» բառերով.

2) «կանգառ» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«կանգառ՝ մինչև 5 րոպե կամ ուղեւորի նստելու, իջնելու եւ (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը.».

3) «կայանում» հասկացությունն «անշարժ» բառից առաջ լրացնել «կանխամտածված» բառով.

4) «կցորդ (կիսակցորդ)» հասկացությունը «երթևեկելու համար» բառերից հետո լրացնել «(ներառյալ հատուկ կցորդը)» բառերով.

5) «հարկադրված կանգառ» եւ «հեծանիվ» հասկացությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հարկադրված կանգառ՝ տրանսպորտային միջոցի անսարքության կամ վարորդի կամ ուղեւորի ֆիզիկական եւ (կամ) հոգեկան վիճակով եւ (կամ) բեռի փոխադրմամբ պայմանավորված՝ վտանգի կամ ճանապարհին ի հայտ եկած այլ խոչընդոտի պատճառով կամ լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին ենթարկվելու կամ այլ տրանսպորտային միջոցներին ճանապարհը զիջելու կամ ճանապարհային երթևեկության այլ մասնակցի կամ որեւէ արգելքի հետ ընդհարումը կանխելու կամ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ոստիկանության ծառայողի կամ այլ իրավասու անձի՝ օրենքով սահմանված կարգով տրված պահանջը կատարելու կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված պահանջը կատարելու նպատակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը: Կանգառի համար օրենսդրությամբ սահմանված կանոնները չեն տարածվում հարկադրված կանգառի դեպքերի վրա.

հեծանիվ՝ առնվազն 2 անիվ ունեցող եւ որպես կանոն դրա վրա գտնվող անձի մկանային ուժով, մասնավորապես ոտնակի կամ բռնակի օգնությամբ շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց,

բացառությամբ հաշմանդամային սայլակի, որը կարող է ունենալ նաեւ երկարատեւ ծանրաբեռնվածության ռեժիմում 0.25 կՎտ-ը չգերազանցող նոմինալ առավելագույն հզորությամբ՝ 25 կմ/ժ-ից ավելի արագության դեպքում ավտոմատ անջատվող էլեկտրական շարժիչ.».».

6) «մոպեդ», «մեխանիկական տրանսպորտային միջոց» եւ «մոտոցիկլ» հասկացությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«մոպեդ՝ 50 սմ<sup>3</sup> աշխատանքային ծավալը չգերազանցող աշխատանքային ծավալով ներքին այրման շարժիչ կամ երկարատեւ ծանրաբեռնվածության ռեժիմում 0.25 կՎտ-ից ավելի եւ 4 կՎտ-ից պակաս նոմինալ առավելագույն հզորությամբ էլեկտրական շարժիչ ունեցող երկանիվ կամ եռանիվ մեխանիկական տրանսպորտային միջոց, որի առավելագույն կառուցվածքային արագությունը չի գերազանցում 50 կմ/ժ-ը: Մոպեդին են հավասարեցվում համարժեք տեխնիկական բնութագրեր ունեցող քվադրիցիկլերը.

մեխանիկական տրանսպորտային միջոց՝ շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց, ներառյալ՝ տրակտորները, ինքնագնաց մեքենաները եւ մեխանիզմները (բացի այն տրանսպորտային միջոցներից, որոնց շարժիչի աշխատանքային ծավալը չի գերազանցում 50 խորանարդ սանտիմետրը), ինչպես նաեւ տրոլեյբուսները եւ էլեկտրամոբիլները.

մոտոցիկլ՝ կողային կցորդով կամ առանց դրա երկանիվ մեխանիկական տրանսպորտային միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը (ներքին այրման շարժիչի դեպքում) գերազանցում է 50 սմ<sup>3</sup>-ը կամ առավելագույն կառուցվածքային արագությունը (ցանկացած շարժիչի դեպքում) գերազանցում է 50 կմ/ժ-ը: Մոտոցիկլին են հավասարեցվում նաեւ լրակազմված եւ լցավորված վիճակում առանց վարորդի, ուղեւորների, բեռի, իսկ էլեկտրական տրանսպորտային միջոցների դեպքում՝ նաեւ առանց մարտկոցների՝ 400 կգ-ը (բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների համար՝ 550 կգ) չգերազանցող զանգված եւ 15 կՎտ-ը չգերազանցող շարժիչի առավելագույն արդյունավետ հզորություն ունեցող տրիցիկլերը, ինչպես նաեւ մոտոցիկլային նստեցվածքով կամ մոտոցիկլային տեսակի դեկով քվադրիցիկլերը.».».

7) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր հասկացություններով.

«բեռնաուղեւորատար ավտոմոբիլ՝ իր կառուցվածքով եւ կահավորվածությամբ բեռների փոխադրման, ինչպես նաեւ ուղեւորների համար նախատեսված 6-ից ոչ ավելի նստատեղ ունեցող, ուղեւորների եւ ուղեբեռի անվտանգ եւ հարմարավետ (բեռի փոխադրման համար նախատեսված հատվածը ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման սրահից հուսալիորեն առանձնացված) փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլ.

էլեկտրամոբիլ՝ էլեկտրաէներգիայի ինքնուրույն աղբյուրից սնուցվող մեկ կամ մի քանի էլեկտրաշարժիչներով շարժման մեջ դրվող ավտոմոբիլ (բացառությամբ տրոլեյբուսի եւ տրամվայի).

հատուկ ավտոմոբիլ՝ իր վրա տեղադրված ագրեգատների, սարքերի եւ սարքավորումների օգնությամբ տարբեր՝ առավելապես ոչ տրանսպորտային (մարդ կամ բեռ փոխադրելու հետ չկապված) աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված ավտոմոբիլ.

հատուկ կցորդ (կիսակցորդ)՝ իր վրա տեղադրված ագրեգատների, սարքերի եւ սարքավորումների օգնությամբ տարբեր՝ առավելապես ոչ տրանսպորտային (մարդ կամ բեռ փոխադրելու հետ չկապված) աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված կցորդ (կիսակցորդ).

տրիցիկլ` տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթության համեմատ համաչափ տեղակայված երեք անիվներով տրանսպորտային միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը (ներքին այրման շարժիչի դեպքում) գերազանցում է 50 սմ<sup>3</sup> -ը եւ (կամ) առավելագույն կառուցվածքային արագությունը (ցանկացած շարժիչի դեպքում) գերազանցում է 50 կմ/ժ-ը.

քվադրիցիկլ` 25 կմ/ժ-ից ոչ պակաս առավելագույն կառուցվածքային արագությամբ, 15 կՎտ-ից ոչ ավել շարժիչի առավելագույն հզորությամբ, լրակազմված եւ լցավորված վիճակում առանց վարորդի, ուղեւորների, բեռի, իսկ էլեկտրական տրանսպորտային միջոցների դեպքում` նաեւ առանց մարտկոցների զանգվածի` 400 կգ-ից (բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների համար` 550 կգ-ից) ոչ ավել զանգվածով, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին շահագործման համար նախատեսված քառանիվ մոտոտրանսպորտային միջոց.

քվադրոցիկլ` 69 կՊա-ից (0.7 կգուժ/սմ<sup>2</sup> ) ոչ ավել ներքին ճնշմամբ անվադողերով, մոտոցիկլային նստեցվածքով նստատեղ եւ մոտոցիկլային տեսակի դեկ ունեցող, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից դուրս միայն մեկ մարդու (վարորդի) փոխադրման (երթեւեկության) համար նախատեսված մոտոտրանսպորտային արտաճանապարհային քառանիվ միջոց (մոտոամենագնաց): Քվադրոցիկլերը (մոտոամենագնացները), ինչպես նաեւ ձյունաձահձագնացները եւ ձյունագնացներն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով շահագործելն արգելվում է.»:

**Հոդված 2.** Օրենքի 9-րդ հոդվածի «իբ» եւ «իդ» կետերը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածի`

1) 8-րդ մասի 1-ին ենթակետը **«գործարքով» բառից հետո** լրացնել «(հասարակ գրավոր գործարքի կատարումը եւ **դրանից ծագող** տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի **պետական** գրանցումը, ինչպես նաեւ գրավի եւ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի **պետական** գրանցումը կարող է իրականացվել նաեւ ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային հարթակում` առանց ճանապարհային ոստիկանության իրավասու ստորաբաժանում ներկայանալու, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով)» բառերով.

2) 9-րդ եւ 10-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9. Իրավասու մարմնի թույլտվության հիման վրա վերասարքավորված տրանսպորտային միջոցի` սույն օրենքով նախատեսված իրավունքների պետական գրանցումը եւ հաշվառումը, բացառությամբ տրանսպորտային միջոցը խոտանելու հետ կապված հաշվառումից հանելու դեպքերի, կատարվում են վերասարքավորված վիճակում տեխնիկական զննություն անցնելու արդյունքում` վերասարքավորման ժամանակ կատարված փոփոխությունների մասով տրանսպորտային միջոցը սարքին լինելու վերաբերյալ տեխնիկական զննության արատորոշման քարտում կատարված գրառման (դրական եզրակացության) հիման վրա: Տրանսպորտային միջոցի վերասարքավորման դեպքում տրանսպորտային միջոցի թողարկման տարեթիվը փոխելը, ինչպես նաեւ վերասարքավորման արդյունքում այլ մակնիշի տրանսպորտային միջոց հավաքելը (ստեղծելը) արգելվում է:

10. Տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը մերժվում է, եթե`

1) ներկայացված չեն սույն օրենքի 9-րդ հոդվածի **1-ին մասի** «ժա» կետի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած՝ տրանսպորտային միջոցների պետական գրանցման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկով նախատեսված փաստաթղթերը.

2) չի պահպանվել սույն հոդվածի 2-րդ մասով՝ տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի (բացառությամբ այլ երկրներում տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով ծագած սեփականության իրավունքի) գրանցման ներկայացնելու համար սահմանված ժամկետը (առաջին զործարք), բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետը չպահպանելը (բաց թողնելը) տեղի է ունեցել առանց անձի մեղքի, որի դեպքում անձը կարող է դիմում ներկայացնել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու եւ վերականգնելու համար.

3) տրանսպորտային միջոցը չի ներկայացվել ճանապարհային ոստիկանություն, բացառությամբ կառավարության որոշմամբ սահմանված դեպքերի.

4) առկա է տրանսպորտային միջոցի իրական (փաստացի) եւ փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն.

5) տրանսպորտային միջոցը կամ դրա համարակիր մասերից մեկը հետախուզման մեջ է.

6) օրենքով սահմանված կարգով տրանսպորտային միջոցի նկատմամբ կիրառված է արգելադրում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 243.1 -րդ հոդվածով սահմանված դեպքերի.

7) տրանսպորտային միջոցը հավաքված է տարբեր տրանսպորտային միջոցների առանձին մասերից կամ առանձին պահեստամասերից, բացառությամբ ինքնաշեն տրանսպորտային միջոցների.

8) տրանսպորտային միջոցն առանց համապատասխան թույլտվության կահավորված է առկայծող փարոսիկներով եւ (կամ) հատուկ ձայնային ազդանշաններով, կամ տրանսպորտային միջոցի թափքի արտաքին մակերեսային վրա առանց համապատասխան թույլտվության փակցված են գունազծապատկերներ, գրառումներ եւ այլ նշումներ, կամ դրանք չեն համապատասխանում սահմանված պահանջներին, եթե մինչեւ տրանսպորտային միջոցի **նկատմամբ սեփականության իրավունքի** պետական գրանցումը մերժելը դրանք հնարավոր չէ վերացնել:».

3) 11-րդ մասում «իսկ տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը պահվում է գրավառուի մոտ» բառերը փոխարինել «իսկ տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը գրավառուի ցանկությամբ պահվում է գրավառուի մոտ» բառերով:

4) 12-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12. Տրանսպորտային միջոցի գրավի եւ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցումը չի կարող մերժվել, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) ներկայացված չեն սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումը կամ դրան կցվող փաստաթղթերը կամ չի պահպանվել սույն հոդվածի 11-րդ մասով՝ տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման ներկայացնելու համար սահմանված ժամկետը.

2) լիզինգի պայմանագրով վարձակալության հանձնվող տրանսպորտային միջոցի նկատմամբ սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված կարգով կիրառվել է արգելադրում:»:

**Հոդված 4.** Օրենքի 13.1 հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

*«Հոդված 13.1 Տրանսպորտային միջոցների պետական գրանցման եւ պետական հաշվառման տվյալների փոխանցումը (տրամադրումը)*

Ճանապարհային ուստիկանությունում գրանցված կամ հաշվառված (վերահաշվառված) կամ հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները առանց տվյալների սուբյեկտի համաձայնության փոխանցվում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին եւ փաստաբաններին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ պետական կառավարման մարմիններին եւ իրավաբանական անձանց:»:

**Հոդված 5.** Օրենքի 18.2 -րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

*«Հոդված 18.2. Տրանսպորտային միջոցների շահագործման արգելումը հաշվառման փաստաթուղթը վերցնելով*

1. Սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ժա», «ժբ» կետերով եւ երկրորդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ճանապարհային երթեւեկության անվտանգությունն ապահովող ուստիկանության ծառայողը պարտավոր է արձանագրել խախտումը եւ վերցնել տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը գտնվում է վարորդի մոտ: Այդ դեպքում կտրոնը փակցվում է սահմանված տեղում, եւ թույլատրվում է տրանսպորտային միջոցի հետագա շահագործումը:

2. Սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ժա» եւ «ժբ» կետերով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը վերցնելու դեպքում վարորդին տրվում է 10-օրյա ժամկետով ժամանակավոր փաստաթուղթ՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության կտրոնը փակցնելու կամ գործարանային տեսքի բերելու կամ վերասարքավորումն օրինականացնելու համար: Տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակավոր փաստաթղթի ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Տրանսպորտային միջոցների շահագործումը՝ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը վերցնելով արգելելու եւ ժամանակավոր փաստաթուղթ տալու դեպքում, իրավասու պաշտոնատար անձը գրառում է կատարում վարչական իրավախախտման արձանագրության մեջ:

4. Տրանսպորտային միջոցի շահագործումը՝ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը վերցնելով արգելելու հիմքերը վերացնելուց հետո, հաշվառման փաստաթուղթն անմիջապես վերադարձվում է տրանսպորտային միջոցի վարորդին, սեփականատիրոջը կամ սեփականատիրոջ ներկայացուցչին:»:

**Հոդված 6.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «դ» կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«դ) ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունենալու դեպքում՝ անմիջապես կանգնեցնել եւ (կամ) չտեղաշարժել տրանսպորտային միջոցը, միացնել վթարային լուսային ազդանշանը, տեղադրել «Վթարային կանգառ» ճանաչման նշանը, չտեղաշարժել պատահարի հետ կապված առարկաները, առկայության դեպքում՝ նաեւ դիրքը, չփոփոխել ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների՝ միմյանց եւ ճանապարհային ենթակառուցվածքների օբյեկտների

նկատմամբ դիրքը, չվնասել եւ չծեւափոխել հետքերը, այնուհետեւ գործել սույն հոդվածի 4-րդ եւ 4.1-ին մասերով սահմանված նորմերի պահանջներով: Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում հետվթարային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է միացված լինեն նաեւ օգնության համար դեպքի վայրին անմիջապես մոտ կանգնեցված տրանսպորտային միջոցների վթարային լուսային ազդանշանները:».

2) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում մահացել կամ վիրավորվել են մարդիկ, ապա ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդը պարտավոր է`

1) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ` տուժածներին առաջին օգնություն ցույց տալու համար, կանչել «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն եւ ճանապարհատրանսպորտային պատահարի մասին հայտնել ոստիկանություն.

2) ծայրահեղ դեպքերում` տուժածներին համընթաց շարժվող տրանսպորտային միջոցով ուղարկել, իսկ եթե դա անհնար է` իր տրանսպորտային միջոցով տեղափոխել մոտակա բժշկական կազմակերպություն, այնտեղ հայտնել իր անունը, ազգանունը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը (ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական վկայական եւ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթ) եւ վերադառնալ պատահարի վայր.

3) ձեռնարկել բոլոր հնարավոր իրավաչափ միջոցները ճանապարհային երթեւեկության այլ մասնակիցների կողմից պատահարի վայրի շրջանցումը կազմակերպելու ուղղությամբ.

4) սպասել ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների ներկայանալուն, այնուհետեւ գործել նրանց հրահանգներով:».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր` 4.1-ին, 4.2-րդ եւ 4.3-րդ մասերով.

«4.1. Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում պատճառվել է միայն գույքային վնաս, եւ եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում գույքի վնասման հետ կապված վնասվածքներ հասցնելու հանգամանքները, տրանսպորտային միջոցների տեսանելի վնասների բնույթը եւ ցանկը ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների միջեւ.

1) առաջացնում են տարածայնություններ կամ չեն առաջացնում տարածայնություններ, սակայն ճանապարհատրանսպորտային պատահարի հատկանիշները (պատահարին մասնակից տրանսպորտային միջոցների քանակը եւ (կամ) ակնկալվող հատուցման չափը) չեն համապատասխանում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված` համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով տուժողների վնասների հատուցման գործընթացին ներկայացված պայմաններին, ապա ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդը պարտավոր է տեղի ունեցածի մասին հայտնել ոստիկանություն, սպասել ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների ներկայանալուն եւ մինչեւ ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների ներկայանալը ձեռնարկել բոլոր հնարավոր իրավաչափ միջոցները ճանապարհային երթեւեկության այլ մասնակիցների կողմից պատահարի վայրի շրջանցումը կազմակերպելու ուղղությամբ, իսկ ոստիկանության

կամ այլ իրավասու մարմնի ծառայողների պատահարի վայր ներկայանալուց հետո գործել վերջիններիս կողմից տրված հրահանգներով (ցուցումներով)՝ մասնակցելով պատահարի գրանցման եւ անհրաժեշտ ստուգումների անցկացման հետ կապված գործողություններին.

2) չեն առաջացնում տարածայնություններ, ապա ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդները պարտավոր չեն տեղի ունեցածի մասին հայտնել ոստիկանություն եւ կարող են.

ա. ինքնուրույն ձեւակերպել ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ փաստաթղթեր՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով տուժողների վնասների հատուցման գործընթացին ներկայացված պայմաններին համապատասխան եւ թողնել պատահարի վայրը, եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հատկանիշները (պատահարին մասնակից տրանսպորտային միջոցների քանակը եւ (կամ) ակնկալվող հատուցման չափը) համապատասխանում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով տուժողների վնասների հատուցման գործընթացին ներկայացված պայմաններին.

բ. չձեւակերպել ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ փաստաթղթեր, եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում վնասվել են միայն դրա մասնակիցների տրանսպորտային միջոցները կամ այլ գույքը, եւ մասնակիցներից յուրաքանչյուրի մոտ բացակայում է նշված փաստաթղթերը ձեւակերպելու եւ (կամ) միմյանց նկատմամբ (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունների միջոցով) պահանջներ ներկայացնելու ցանկությունը:

4.2. Սույն հոդվածի 4.1-ին մասի 2-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով նախատեսված դեպքերում վարորդների կողմից նշված պատահարի վերաբերյալ հետագայում ոստիկանությանը դիմում կամ հաղորդում ներկայացնելու դեպքում որեւէ վարույթ չի իրականացվում, եւ դիմումը կամ հաղորդումը թողնվում են անհետեւանք:

4.3. Սույն հոդվածի 4.1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում ոստիկանությունը ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում, ապահովելով ճանապարհային երթեւեկության անվտանգությունը, հավաքագրում է ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների, նրանց տրանսպորտային միջոցների եւ պատահարի հանգամանքների վերաբերյալ տվյալներ՝ կազմելով պատահարի մասին եւ պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների մասին արձանագրություններ՝ ամրագրելով (այդ թվում՝ լուսանկարահանման կամ տեսանկարահանման միջոցով) ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների՝ միմյանց եւ ճանապարհային ենթակառուցվածքների օբյեկտների նկատմամբ դիրքը, հետքերը, առարկաները, տրանսպորտային միջոցների կամ այլ գույքի վնասվածքները: Պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների մասին արձանագրությունը կարող է չկազմվել, եթե ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել ցերեկը՝ օրվա լուսավոր ժամին, բավարար տեսանելության պայմաններում, եւ

առկա է դրա տեղի ունենալու պահի եւ դրան անմիջապէս հաջորդող՝ պատահարի մասնակիցների գործողությունների տեսագրություն: Պատահարի մասին եւ պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների մասին արձանագրությունները, ինչպէս նաեւ տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի հետ կապված ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ կարող է ցանկացած եղանակով տրամադրվել (հասանելի դարձվել) Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյին եւ (կամ) դրա անդամ ապահովագրական ընկերություններին եւ (կամ) երրորդ անձանց՝ ճանապարհատրանսպորտային պատահարի գծով իրականացվող հատուցման գործընթացի կարգավորման ներառյալ փորձաքննությունների իրականացման եւ ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Պատահարի մասին արձանագրության ձեւը եւ դրանում պարունակվող տեղեկատվությունը, ինչպէս նաեւ պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների կազմի ու կառուցվածքի նկատմամբ պահանջները հաստատում է ոստիկանության պետը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:».

4) 5-րդ մասի «ա» կետի 1-ին ենթակետում «տվյալ կարգի» բառերից հետո լրացնել «կամ ենթակարգի» բառերը.

5) 5-րդ մասի «գ» կետում «մոտոցիկլով երթելեկելիս» բառերից հետո լրացնել «, ինչպէս նաեւ մոպեդով կամ հեծանիվով երթելեկելի մասով երթելեկելիս» բառերը.

6) 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 7. Օրենքը լրացնել նոր 24.2 -րդ եւ 24.3-րդ հոդվածներով՝ հետեւյալ բովանդակությամբ.*

***«Հոդված 24.2. ՀԵԾԱՆՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՍՈՊԵՂՆԵՐԻ ՎՈՐՈՐԴՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ***

1. 14 տարեկանից բարձր տարիք ունեցող հեծանվորդների երթելեկությունը պետք է իրականացվի հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով կամ հեծանվորդների համար գոտիով:

2. 14-ից բարձր տարիքի հեծանվորդների երթելեկությունը թույլատրվում է՝

1) երթելեկելի մասի աջ եզրով հետեւյալ դեպքերում.

ա. բացակայում են հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով երթելեկելն անհնար է,

բ. հեծանիվի, հեծանվակցորդի կամ տեղափոխվող բեռի եզրաչափային լայնությունը գերազանցում է 1 մ,

գ. հեծանվորդների երթելեկությունն իրականացվում է շարասյան մեջ.

2) կողնակով, եթե բացակայում են հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով կամ երթելեկելի մասի աջ եզրով երթելեկելն անհնար է.

3) մայթով կամ հետիոտնային արահետով հետեւյալ դեպքերում.

ա. բացակայում են հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով կամ երթելեկելի մասի աջ եզրով կամ կողնակով երթելեկելն անհնար է,

բ. հեծանվորդն ուղեկցում է մինչեւ 14 տարեկան հեծանվորդի կամ լրացուցիչ նստատեղին, հեծանվասայլակում կամ հեծանվակցորդում տեղափոխում է մինչեւ 7 տարեկան երեխա:



3. 7-ից մինչև 14 տարեկան հեծանվորդների երթելակությունը պետք է իրականացվի միայն մայթերով, հետիոտնային, հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետներով, ինչպես նաեւ հետիոտնային գոտիների սահմաններում:

4. Մինչև 7 տարեկան հեծանվորդների երթելակությունը պետք է իրականացվի միայն մայթերով, հետիոտնային եւ հեծանվահետիոտնային արահետներով (հետիոտների երթելակության համար նախատեսված կողմով), ինչպես նաեւ հետիոտնային գոտիների սահմաններում:

5. Երթելակելի մասի աջ եզրով հեծանվորդների երթելակության ժամանակ հեծանվորդները պետք է երթելեն միայն մեկ շարքով:

6. Հեծանվորդների շարասյան երթելակությունը երկու շարքով թույլատրվում է, եթե հեծանիվների եզրաչափային լայնությունը չի գերազանցում 0,75 մ:

7. Մեկ շարքով երթելակության դեպքում հեծանվորդների շարասյունը պետք է բաժանված լինի խմբերի՝ յուրաքանչյուրում 10-ական հեծանվորդ, իսկ երկու շարքով երթելակության դեպքում՝ յուրաքանչյուրում 10-ական զույգ հեծանվորդ: Վազանցը հեշտացնելու համար խմբերի միջեւ տարածությունը պետք է կազմի 80?100 մ:

8. Եթե հեծանվորդի երթելակությունը մայթով, հետիոտնային արահետով, կողնակով կամ հետիոտնային գոտիների սահմաններում վտանգում կամ խոչընդոտում է այլ անձանց երթելակությունը, հեծանվորդը պարտավոր է իջնել հեծանիվից եւ ղեկավարվել հետիոտների երթելակության համար օրենսդրությամբ նախատեսված պահանջներով:

9. Մոպեդների վարորդները պետք է երթելեն երթելակելի մասի աջ եզրով մեկ շարքով կամ հեծանվորդների համար գոտիով:

10. Մոպեդների վարորդների երթելակությունը թույլատրվում է կողնակներով, եթե դա չի խոչընդոտում հետիոտներին:

11. Հեծանվորդներին եւ մոպեդների վարորդներին արգելվում է՝

1) վարել հեծանիվը կամ մոպեդը առանց ղեկը բռնելու,

2) փոխադրել բեռ, որը խանգարում է ղեկավարելուն կամ որը երկարությամբ կամ լայնությամբ ավելի քան 0,5 մ գերազանցում է այդ տրանսպորտային միջոցի եզրաչափը,

3) տեղափոխել ուղեւոր, եթե դա նախատեսված չէ տրանսպորտային միջոցի կառուցվածքով,

4) տեղափոխել մինչև 7 տարեկան երեխա՝ նրա համար հատուկ կահավորված նստատեղի բացակայության դեպքում կամ այդ նստատեղից դուրս,

5) կատարել ձախ շրջադարձ կամ հետադարձ տրամվայի երթելակությամբ, ինչպես նաեւ տվյալ ուղղությամբ մեկից ավելի երթելակության գոտի ունեցող ճանապարհներին,

6) հատել ճանապարհը հետիոտնային անցումներով:

12. Արգելվում է հեծանիվների եւ մոպեդների, ինչպես նաեւ հեծանիվներով եւ մոպեդներով քարշակումը, բացառությամբ հեծանիվի կամ մոպեդի հետ շահագործման համար նախատեսված հեծանվակցորդի կամ կցորդի քարշակման:

13. Խաչմերուկներից դուրս գտնվող հեծանվային արահետի եւ ճանապարհի չկարգավորվող փոխհատման վրա հեծանվորդները եւ մոպեդների վարորդները պետք է գիջեն ճանապարհով երթելակող տրանսպորտային միջոցներին:

**Հոդված 24.3. Լծասայլերի (լծասահնակների) երթելակության, բեռնակիր եւ հեծկան կենդանիներին, ինչպես նաեւ անասուններին քշելու լրացուցիչ պահանջները**

1. Երթելակելի մասով լծասայլ (լծասահնակ) վարել, բեռնակիր կամ հեծկան կենդանիներ կամ անասուններ քշել թույլատրվում է 14 տարեկանը լրացած անձանց:

2. Լծասայլերը (լծասահնակները) պետք է վարել, իսկ բեռնակիր եւ հեծկան կենդանիներին քշել մեկ շարքով, երթելակելի մասի եզրով, հնարավորին չափ աջով: Թույլատրվում է շարժվել կողնակներով, եթե դա չի խոչընդոտի հետիոտներին:

3. Լծասայլերի (լծասահնակների), բեռնակիր եւ հեծկան կենդանիների շարասյուները երթելակելի մասով շարժվելիս պետք է բաժանված լինեն խմբերի, յուրաքանչյուրում` 10-ական բեռնակիր կամ հեծկան կենդանի կամ 5-ական լծասայլ (լծասահնակ): Խմբերի վազանցումը հեշտացնելու համար դրանց միջեւ հեռավորությունը պետք է լինի 80-100 մ:

4. Լծասայլի (լծասահնակի) վարորդը մերձակա տարածքից կամ երկրորդական ճանապարհից ճանապարհ դուրս գալիս սահմանափակ տեսադաշտով վայրերում կենդանիներին պետք է տանի սանձից բռնած:

5. Կենդանիներին ճանապարհով, որպես կանոն, պետք է քշել օրվա լուսավոր ժամերին` հնարավորին չափ ուղորդելով դեպի ճանապարհի աջ եզրը:

6. Կենդանիներին երկաթուղային գծերն անցկացնելիս դրանք պետք է բաժանվեն այնպիսի քանակությամբ խմբերի, որպեսզի անասնավարների քանակից ելնելով` հնարավոր լինի ապահովել յուրաքանչյուր խմբի անվտանգ անցումը:

7. Լծասայլերի (լծասահնակների) վարորդներին, բեռնակիր, հեծկան կենդանիներ եւ անասուններ քշողներին արգելվում է`

1) կենդանիներին թողնել ճանապարհին առանց հսկողության,

2) կենդանիներին քշել երկաթուղային գծերով եւ ճանապարհներով` դրա համար նախատեսված տեղերից դուրս, ինչպես նաեւ օրվա մութ ժամանակ եւ անբավարար տեսանելիության պայմաններում (բացի տարբեր մակարդակների վրա անասուններին երկաթուղային գծերը կամ ճանապարհն անցկացնելուց),

3) այլ ուղիների առկայության դեպքում կենդանիներին քշել ասֆալտբետոնե եւ ցեմենտբետոնե ծածկույթով ճանապարհներով,

4) կենդանիներին արածեցնել ճանապարհի կանաչապատված բաժանարար գոտում, ճանապարհին 100 մ մոտ տարածքներում, ինչպես նաեւ դրանց կուտակել երթելակելի մասերում եւ մայթերին:

8. Արգելվում է վարել լծասայլ, եթե այն`

1) կահավորված չէ կառուցվածքով նախատեսված կայանման արգելակով եւ հակազլորման հենակներով.

2) առջելի մասում չունի սպիտակ գույնի երկու լուսանդրադարձիչներ կամ լապտերներ (օրվա մութ ժամանակ կամ անբավարար տեսանելիության պայմաններում երթելակելու համար).

3) հետեւի մասում չունի կարմիր գույնի երկու լուսանդրադարձիչներ կամ լապտերներ:»:

**Հոդված 8.** Օրենքի 27-րդ հոդվածում`

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) «AM» ենթակարգ` մոպեդներ եւ դրանց համարժեք տեխնիկական բնութագրեր ունեցող քվադրիցիկլներ.».».

2) 1-ին մասը լրացնել նոր 1.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) «A1» ենթակարգ` ոչ ավելի, քան 125 խորանարդ սմ աշխատանքային ծավալով եւ ոչ ավելի, քան 11 կՎտ (կամ 15 ծիաուժ) առավելագույն հզորությամբ շարժիչով մոտոցիկլեր (թեթեւ մոտոցիկլեր).».

3) 1-ին մասի 2-րդ կետում ««A1» ենթակարգին» բառերը փոխարինել ««AM» եւ «A1» ենթակարգերին» բառերով.

4) 1-ին մասի 3-րդ կետում «քվադրոցիկլեր» բառը փոխարինել «քվադրիցիկլեր» բառով.

5) 3-րդ մասի 1-ին ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) «AM» ենթակարգի` 16 տարին լրացած անձանց, իսկ «A», «B» եւ «C» կարգերի ու «A1», «B1» եւ «C1» ենթակարգերի` 18 տարին լրացած անձանց.».».

6) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

7) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետությունում գործում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանող ազգային եւ միջազգային վարորդական վկայականներ, ընդ որում` Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված միջազգային վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության տարածքում տրանսպորտային միջոցներ վարելու համար համարվում են չգործող:».

8) 7-րդ մասում «A1» բառից առաջ լրացնել «AM,» բառը.

9) լրացնել նոր 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ եւ 19-րդ մասերով հետեւյալ բովանդակությամբ.

«10. «A» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող` Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «AM» եւ «A1» ենթակարգի, ինչպես նաեւ մոտոցիկլային նստատեղ կամ դեկ ունեցող «B1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «B» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող` Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «B1» ենթակարգի (բացառությամբ մոտոցիկլային նստատեղ կամ դեկ ունեցող տրանսպորտային միջոցների) տրանսպորտային միջոցներ, «C» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող` Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «C1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «D» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող` Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «CE» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող` Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է

վերապահում վարել նաեւ «C1E» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «DE» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «D1E» ենթակարգի տրանսպորտային միջոցներ:

11. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված (այդ թվում՝ այլ պետություններում փոխանակված), ինչպես նաեւ ԽՍՀՄ պետությունների իրավասու մարմինների կողմից մինչեւ 1992 թվականի փետրվարի 21-ը տրված վարորդական վկայականը կորցնելու, ինչպես նաեւ փոխանակման դեպքերում դրա տնօրինողին **Հայաստանի Հանրապետության** օրենսդրությամբ սահմանված կարգով նույն կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի նոր վարորդական վկայական է տրվում առանց որակավորման քննություններ հանձնելու:

12. Հայաստանի Հանրապետության՝ երկքաղաքացի հանդիսացող քաղաքացիների՝ այլ երկրներում ստացած եւ Վիեննայի 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայով եւ դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականների հիման վրա Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայական տրվում է առանց որակավորման քննություններ հանձնելու:

13. Այլ պետություններում ստացած եւ Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայով եւ դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականը փոխանակվում է առանց որակավորման քննություններ հանձնելու:

14. Կորցրած կամ գողացված օտարերկրյա (բացառությամբ ԽՍՀՄ պետությունների իրավասու մարմինների կողմից մինչեւ 1992 թվականի փետրվարի 21-ը տրված) ազգային եւ միջազգային վարորդական վկայականի փոխարեն Հայաստանի Հանրապետության ազգային եւ միջազգային վարորդական վկայականների հատկացում չի կատարվում:

15. Այլ պետություններում ստացած եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին չհամապատասխանող ազգային եւ միջազգային վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության ազգային եւ միջազգային վարորդական վկայականներով չեն փոխանակվում եւ կորած վարորդական վկայականի կրկնօրինակ չի տրվում:

16. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային վարորդական վկայականով թույլատրվում է վարել տրանսպորտային միջոցներ միայն ազգային վարորդական վկայականի առկայության դեպքում:

17. Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցներ վարելու հետ անմիջականորեն կապված ձեռնարկատիրական եւ (կամ) աշխատանքային գործունեություն ծավալել օտարերկրյա ազգային կամ միջազգային վարորդական վկայականներով, բացառությամբ միջազգային փոխադրումներ իրականացնելու դեպքերի: Սույն մասով նախատեսված արգելքը փոխադարձության սկզբունքով չի կիրառվում Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների քաղաքացիների նկատմամբ:

18. Այլ երկրում, որը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հետ համատեղ ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովման ոլորտում միջազգային պայմանագրերի մասնակից, տրված ազգային վարորդական վկայականը փոխադարձության պայմանով համարվում է գործող Հայաստանի Հանրապետության տարածքում տրանսպորտային միջոց վարելու համար միայն այն դեպքում, եթե այն ներկայացվում է **նոտարական** կարգով հաստատված հայերեն լեզվով թարգմանությունով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վարորդական վկայականի բոլոր գրառումները կատարված են կամ կրկնօրինակված են լատիներեն այբուբենի տառերի նման:

19. Օտարերկրյա ազգային եւ միջազգային վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության տարածքում տրանսպորտային միջոցներ վարելու համար համարվում են գործող նշված վարորդական վկայականների համապատասխան կարգերի եւ ենթակարգերի տրանսպորտային միջոցների համար՝ տիրապետողների տարիքը սույն հոդվածով սահմանված տարիքը լրանալու պահից:»:

**Հոդված 9.** Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 1.2-րդ մասում «A1» բառից առաջ լրացնել «AM,» բառը.

2) լրացնել նոր՝ 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ, 1.7-րդ և 1.8-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

**«1.3. «A», «B» և «BE» կարգերի, ինչպես նաև «AM», «A1» և «B1» ենթակարգերի վարորդական իրավունքի վկայական ստանալու համար (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) դիմած անձը պետք է անցնի բժշկական հավատարմագրում, եթե՝**

ա) վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացն իրականացնելու ընթացքում ակնհայտ երևում է, որ նա կարող է ունենալ սույն օրենքի 22.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված տրանսպորտային միջոց շահագործելու համար խոչընդոտ հանդիսացող հակացուցում, ցուցում կամ սահմանափակում (բացակայում են վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթափը, կամ առկա են շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթափի ձևախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, պարանոցի կամ մեջքի խնդիրներ, տեսողության ակնհայտ խանգարումներ կամ աչքի բացակայություն, լսողության ակնհայտ խանգարումներ).

բ) առողջական վիճակի վերաբերյալ լրացված հայտարարագրում առկա է նշում տրանսպորտային միջոց վարելուն խոչընդոտող առողջական վիճակի մասին:

1.4. Սույն հոդվածի 1.3 մասի [] և «բ» կետերով նախատեսված դեպքերում վարորդական իրավունքի վկայական ստանալու համար դիմած անձին ճանապարհային ոստիկանության կողմից բժշկական հավատարմագրման պահանջագիրը տրվում է վարորդական իրավունքի վկայական ստանալու (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) մասին դիմումը ներկայացնելու պահին:

1.5. Բժշկական հավատարմագրման պահանջագրի և առողջական վիճակի վերաբերյալ հայտարարագրի ձևերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

1.6. «C», «D», «T» և «CE», «DE» կարգերի, «C1», «D1» և «C1E», «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական իրավունքի վկայական առաջին անգամ ստանալու համար դիմող անձիք պետք է ճանապարհային ոստիկանություն ներկայացնեն բժշկական հավատարմագրում անցած լինելու մասին տեղեկանք:

1.7. «C», «D», «T» և «CE», «DE» կարգերի, «C1», «D1» և «C1E», «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար դիմած անձը պետք է անցնի բժշկական հավատարմագրում, եթե վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացն իրականացնելու ընթացքում ակնհայտ երևում է, որ նա կարող է ունենալ սույն օրենքի 22.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տրանսպորտային միջոց շահագործելու համար խոչընդոտ հանդիսացող հակացուցում, ցուցում կամ սահմանափակում (ձեռքերի, ոտքերի, ձեռքի մատների շարժումների սահմանափակում կամ ձևախեղումներ կամ դրանց բացակայություն, պարանոցի կամ մեջքի խնդիրներ, տեսողության ակնհայտ խանգարումներ կամ աչքի բացակայություն, լսողության ակնհայտ խանգարումներ) կամ առողջական վիճակի վերաբերյալ լրացված հայտարարագրում առկա է նշում տրանսպորտային միջոց վարելուն խոչընդոտող առողջական վիճակի մասին:

1.8. Տրանսպորտային միջոց վարելուն խոչընդոտող առողջական խնդիրներ ունեցող, թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման ենթակա, ինչպես նաև հոգեբուժական կազմակերպություններում հաշվառված անձանց անձնական տվյալները մշակվում են էլեկտրոնային եղանակով և վարորդական վկայական ստանալու (վարորդական վկայականը փոխանակելու կամ կորած վարորդական վկայականի կրկնօրինակն ստանալու) մասին դիմում ներկայացվելու պահին էլեկտրոնային հարցման դեպքում առողջապահության բնագավառի լիազոր մարմնի միասնական էլեկտրոնային շտեմարանի միջոցով հասանելի են դառնում ճանապարհային ոստիկանությանը:»

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վարորդի թեկնածու կարող է դառնալ 17 տարին լրացած անձը, բացառությամբ «AM» ենթակարգի տրանսպորտային միջոցի վարորդի թեկնածուի: «AM» ենթակարգի տրանսպորտային միջոցի վարորդի թեկնածու կարող է դառնալ 16 տարին լրացած անձը:».

4) 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործնական վարման ուսուցումը կարող է իրականացվել այն ճանապարհներին, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արգելված չէ դրա իրականացումը:»:

**Հոդված 10.** Օրենքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 29. Վարելու իրավունքը դադարելը եւ վարորդական վկայականի ուժը կորցնելը**

1. Անձի վարելու իրավունքը դադարում է, եթե`

ա) առկա է նրան անգործունակ ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ.

բ) առկա է նրա՝ հոգեկան, **թնրամիջոցների և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ պայմանավորված** հիվանդության վերաբերյալ եւ (կամ) առողջական վիճակը օրենսդրությամբ սահմանված պայմաններին չհամապատասխանելու մասին իրավասու մարմնի եզրակացություն.

գ) առկա է վարելու իրավունքից զրկելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ կամ իրավասու այլ մարմնի **ուժի մեջ մտած ակտ**.

դ) նա մահացել է:

2. Անձի վարորդական վկայականն ուժը կորցնում է, եթե՝

ա) առկա է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որեւէ մեկը.

բ) լրացել է վարորդական վկայականի գործողության ժամկետը.

գ) վարորդական վկայականը կորել է, եւ անձը դիմել է նոր վկայական ստանալու համար կամ իրագեկել է կորստյան մասին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» եւ «բ» կետերով նախատեսված հիմքերով ուժը կորցրած վարորդական վկայական հայտնաբերելու դեպքում ոստիկանությունը վերցնում է այդ վարորդական վկայականը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի «ա», «բ» եւ «գ» կետերով նախատեսված հիմքերով դադարեցված վարելու իրավունքը վերականգնվում է վարելու իրավունքը դադարելու հիմքը վերանալուց հետո՝ որակավորման քննությունները հանձնելուց հետո:»:

**Հոդված 11.** Օրենքի 33.1-ին հոդվածի 2-րդ մասի «ժա» կետը «տրանսպորտային միջոցների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների խոտանված հաշվառման համարանիշերի վահանակների» բառերով:

**Հոդված 12.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ և **8-րդ կետերը, 9-րդ կետը՝ նոր 10-րդ մաս լրացնելու մասով**, 9-րդ հոդվածի 1-ին, **2-րդ** և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 1.8-րդ մասով սահմանված էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքներն ավարտին են հասցվում մինչև 2021 թվականի հունիսի 1-ը:

4. Մինչև սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 1.8-րդ մասով սահմանված էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքների ավարտը, վարորդական իրավունքի վկայական ստանալու համար (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) դիմած անձի կողմից ներկայացված առողջական վիճակի վերաբերյալ հայտարարագրում առողջական խնդիրներ չունենալու մասին նշումն ընդունվում է որպես հիմք և վարորդական իրավունքի վկայականի հատակացումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ ձեռքերի, ոտքերի, ձեռքի մատների շարժումների

սահմանափակումների կամ ձևախեղումների կամ դրանց բացակայության, պարանոցի կամ մեջքի խնդիրների, տեսողության ակնհայտ խանգարումների կամ աչքի բացակայության, լսողության ակնհայտ խանգարումների):

5. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4 ամսվա ընթացքում:



## ՏԵՂԵԿԱՆՔ

### «ՃԱՆԱԿԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածում՝

1) «ավտոմոբիլ» հասկացության առաջին նախադասությունը «մեխանիկական տրանսպորտային միջոց» բառերից հետո լրացնել «(թեթև մարդատար ավտոմոբիլ, ավտոբուս, բեռնատար ավտոմոբիլ, բեռնաուղեորատար ավտոմոբիլ, հատուկ ավտոմոբիլ, էլեկտրամոբիլ)» բառերով.

2) «կանգառ» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«կանգառ՝ մինչև 5 բուսեր կամ ուղեւորի նստելու, իջնելու եւ (կամ) տրանսպորտային միջոցը բեռնելու, բեռնաթափելու համար անհրաժեշտ ժամանակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը.».

3) «կայանում» հասկացությունն «անշարժ» բառից առաջ լրացնել «կանխամտածված» բառով.

4) «կցորդ (կիսակցորդ)» հասկացությունը «երթևեկելու համար» բառերից հետո լրացնել «(ներառյալ հատուկ կցորդը)» բառերով.

5) «հարկադրված կանգառ» եւ «հեծանիվ» հասկացությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հարկադրված կանգառ՝ տրանսպորտային միջոցի անսարքության կամ վարորդի կամ ուղեւորի ֆիզիկական եւ (կամ) հոգեկան վիճակով եւ (կամ) բեռի փոխադրմամբ պայմանավորված՝ վտանգի կամ ճանապարհին ի հայտ եկած այլ խոչընդոտի պատճառով կամ լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին ենթարկվելու կամ այլ տրանսպորտային միջոցներին ճանապարհը զիջելու կամ ճանապարհային երթևեկության այլ մասնակցի կամ որեւէ արգելքի հետ ընդհարումը կանխելու կամ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու մասին ոստիկանության ծառայողի կամ այլ իրավասու անձի՝ օրենքով սահմանված կարգով տրված պահանջը կատարելու կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ճանապարհային երթևեկության կանոններով նախատեսված պահանջը կատարելու նպատակով տրանսպորտային միջոցը կանխամտածված անշարժ վիճակի բերելը: Կանգառի համար օրենսդրությամբ սահմանված կանոնները չեն տարածվում հարկադրված կանգառի դեպքերի վրա.

հեծանիվ՝ առնվազն 2 անիվ ունեցող եւ որպես կանոն դրա վրա գտնվող անձի մկանային ուժով, մասնավորապես ոտնակի կամ բռնակի օգնությամբ շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց, բացառությամբ հաշմանդամային սայլակի, որը կարող է ունենալ նաեւ երկարատեւ ծանրաբեռնվածության ռեժիմում 0.25 կՎտ-ը չգերազանցող նոմինալ առավելագույն հզորությամբ՝ 25 կմ/ժ-ից ավելի արագության դեպքում ավտոմատ անջատվող էլեկտրական շարժիչ.».

6) «մոպեդ», «մեխանիկական տրանսպորտային միջոց» եւ «մոտոցիկլ» հասկացությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«մոպեդ՝ 50 սմ<sup>3</sup> աշխատանքային ծավալը չգերազանցող աշխատանքային ծավալով ներքին այրման շարժիչ կամ երկարատեւ ծանրաբեռնվածության ռեժիմում 0.25 կՎտ-ից ավելի եւ 4 կՎտ-ից պակաս նոմինալ առավելագույն հզորությամբ էլեկտրական շարժիչ ունեցող երկանիվ կամ եռանիվ մեխանիկական տրանսպորտային միջոց, որի առավելագույն կառուցվածքային արագությունը չի գերազանցում 50 կմ/ժ-ը: Մոպեդին են հավասարեցվում համարժեք տեխնիկական բնութագրեր ունեցող քվադրիցիկլերը.

մեխանիկական տրանսպորտային միջոց՝ շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոց, ներառյալ՝ տրակտորները, ինքնագնաց մեքենաները եւ մեխանիզմները (բացի այն տրանսպորտային միջոցներից, որոնց շարժիչի աշխատանքային ծավալը չի գերազանցում 50 խորանարդ սանտիմետրը), ինչպես նաեւ տրոլեյբուսները եւ էլեկտրամոբիլները.

մոտոցիկլ՝ կողային կցորդով կամ առանց դրա երկանիվ մեխանիկական տրանսպորտային միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը (ներքին այրման շարժիչի դեպքում) գերազանցում է 50 սմ<sup>3</sup>-ը կամ առավելագույն կառուցվածքային արագությունը (ցանկացած շարժիչի դեպքում) գերազանցում է 50 կմ/ժ-ը: Մոտոցիկլին են հավասարեցվում նաեւ լրակազմված եւ լցավորված վիճակում առանց վարորդի, ուղեւորների, բեռի, իսկ էլեկտրական տրանսպորտային միջոցների դեպքում՝ նաեւ առանց մարտկոցների՝ 400 կգ-ը (բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների համար՝ 550 կգ) չգերազանցող զանգված եւ 15 կՎտ-ը չգերազանցող շարժիչի առավելագույն արդյունավետ հզորություն ունեցող տրիցիկլերը, ինչպես նաեւ մոտոցիկլային նստեցվածքով կամ մոտոցիկլային տեսակի ղեկով քվադրիցիկլերը.».

7) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր հասկացություններով.

«բեռնաուղեւորատար ավտոմոբիլ՝ իր կառուցվածքով եւ կահավորվածությամբ բեռների փոխադրման, ինչպես նաեւ ուղեւորների համար նախատեսված 6-ից ոչ ավելի նստատեղ ունեցող, ուղեւորների եւ ուղեբեռի անվտանգ եւ հարմարավետ (բեռի փոխադրման համար նախատեսված հատվածը ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման սրահից հուսալիորեն առանձնացված) փոխադրման համար նախատեսված ավտոմոբիլ.

էլեկտրամոբիլ՝ էլեկտրաէներգիայի ինքնուրույն աղբյուրից սնուցվող մեկ կամ մի քանի էլեկտրաշարժիչներով շարժման մեջ դրվող ավտոմոբիլ (բացառությամբ տրոլեյբուսի եւ տրամվայի).

հատուկ ավտոմոբիլ՝ իր վրա տեղադրված ագրեգատների, սարքերի եւ սարքավորումների օգնությամբ տարբեր՝ առավելապես ոչ տրանսպորտային (մարդ կամ բեռ փոխադրելու հետ չկապված) աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված ավտոմոբիլ.

հատուկ կցորդ (կիսակցորդ)՝ իր վրա տեղադրված ագրեգատների, սարքերի եւ սարքավորումների օգնությամբ տարբեր՝ առավելապես ոչ տրանսպորտային (մարդ կամ բեռ փոխադրելու հետ չկապված) աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված կցորդ (կիսակցորդ).

տրիցիկլ՝ տրանսպորտային միջոցի միջին երկայնական հարթության համեմատ համաչափ տեղակայված երեք անիվներով տրանսպորտային միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը (ներքին այրման շարժիչի

դեպքում) գերազանցում է 50 սմ<sup>3</sup> -ը եւ (կամ) առավելագույն կառուցվածքային արագությունը (ցանկացած շարժիչի դեպքում) գերազանցում է 50 կմ/ժ-ը.

քվադրոցիկլ` 25 կմ/ժ-ից ոչ պակաս առավելագույն կառուցվածքային արագությամբ, 15 կՎտ-ից ոչ ավել շարժիչի առավելագույն հզորությամբ, լրակազմված եւ լցավորված վիճակում առանց վարորդի, ուղեւորների, բեռի, իսկ էլեկտրական տրանսպորտային միջոցների դեպքում` նաեւ առանց մարտկոցների զանգվածի` 400 կգ-ից (բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների համար` 550 կգ-ից) ոչ ավել զանգվածով, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին շահագործման համար նախատեսված քառանիվ մոտոտրանսպորտային միջոց.

քվադրոցիկլ` 69 կՊա-ից (0.7 կգոմ/սմ<sup>2</sup>) ոչ ավել ներքին ճնշմամբ անվադողերով, մոտոցիկլային նստեցվածքով նստատեղ եւ մոտոցիկլային տեսակի դեկ ունեցող, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներից դուրս միայն մեկ մարդու (վարորդի) փոխադրման (երթելեկության) համար նախատեսված մոտոտրանսպորտային արտաճանապարհային քառանիվ միջոց (մոտոամենագնաց): Քվադրոցիկլերը (մոտոամենագնացները), ինչպես նաեւ ձյունաձահձագնացները եւ ձյունագնացներն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով շահագործելն արգելվում է.»:

**Հոդված 2.** Օրենքի 9-րդ հոդվածի «իբ» եւ «իդ» կետերը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածի`

1) 8-րդ մասի 1-ին ենթակետը **«գործարքով» բառից հետո** լրացնել «(հասարակ գրավոր գործարքի կատարումը եւ ~~դրա հիման վրա~~ **դրանից ծագող** տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի **պետական** գրանցումը, ինչպես նաեւ գրավի եւ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի **պետական** գրանցումը կարող է իրականացվել նաեւ ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային հարթակում` առանց ճանապարհային ոստիկանության իրավասու ստորաբաժանում ներկայանալու, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով)» բառերով.

2) 9-րդ եւ 10-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9. Իրավասու մարմնի թույլտվության հիման վրա վերասարքավորված տրանսպորտային միջոցի` սույն օրենքով նախատեսված իրավունքների պետական գրանցումը եւ հաշվառումը, բացառությամբ տրանսպորտային միջոցը խոտանելու հետ կապված հաշվառումից հանելու դեպքերի, կատարվում են վերասարքավորված վիճակում տեխնիկական զննություն անցնելու արդյունքում` վերասարքավորման ժամանակ կատարված փոփոխությունների մասով տրանսպորտային միջոցը սարքին լինելու վերաբերյալ տեխնիկական զննության արատորոշման քարտում կատարված գրառման (դրական եզրակացության) հիման վրա: Տրանսպորտային միջոցի վերասարքավորման դեպքում տրանսպորտային միջոցի թողարկման տարեթիվը փոխելը, ինչպես նաեւ վերասարքավորման արդյունքում այլ մակնիշի տրանսպորտային միջոց հավաքելը (ստեղծելը) արգելվում է:

10. Տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը մերժվում է, եթե`

1) ներկայացված չեն սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած՝ տրանսպորտային միջոցների պետական գրանցման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկով նախատեսված փաստաթղթերը.

2) չի պահպանվել սույն հոդվածի 2-րդ մասով՝ տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության իրավունքի (բացառությամբ այլ երկրներում տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով ծագած սեփականության իրավունքի) գրանցման ներկայացնելու համար սահմանված ժամկետը (առաջինն գործարք), բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետը չպահպանելը (բաց թողնելը) տեղի է ունեցել առանց անձի մեղքի, որի դեպքում անձը կարող է դիմում ներկայացնել բաց թողնված ժամկետը հարգելի համարելու եւ վերականգնելու համար.

3) տրանսպորտային միջոցը չի ներկայացվել ճանապարհային ոստիկանություն, բացառությամբ կառավարության որոշմամբ սահմանված դեպքերի.

4) առկա է տրանսպորտային միջոցի իրական (փաստացի) եւ փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն.

5) տրանսպորտային միջոցը կամ դրա համարակիր մասերից մեկը հետախուզման մեջ է.

6) օրենքով սահմանված կարգով տրանսպորտային միջոցի նկատմամբ կիրառված է արգելադրում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 243.1 -րդ հոդվածով սահմանված դեպքերի.

7) տրանսպորտային միջոցը հավաքված է տարբեր տրանսպորտային միջոցների առանձին մասերից կամ առանձին պահեստամասերից, բացառությամբ ինքնաշեն տրանսպորտային միջոցների.

8) տրանսպորտային միջոցն առանց համապատասխան թույլտվության կահավորված է առկայծող փարոսիկներով եւ (կամ) հատուկ ձայնային ազդանշաններով, կամ տրանսպորտային միջոցի թափքի արտաքին մակերեւույթի վրա առանց համապատասխան թույլտվության փակցված են գունազծապատկերներ, գրառումներ եւ այլ նշումներ, կամ դրանք չեն համապատասխանում սահմանված պահանջներին, եթե մինչեւ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը մերժելը դրանք հնարավոր չէ վերացնել:».

3) 11-րդ մասում «իսկ տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը պահվում է գրավառուի մոտ» բառերը փոխարինել «իսկ տրանսպորտային միջոցի սեփականության վկայականը գրավառուի ցանկությամբ պահվում է գրավառուի մոտ» բառերով:

4) 12-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«12. Տրանսպորտային միջոցի գրավի եւ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցումը չի կարող մերժվել, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) ներկայացված չեն սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումը կամ դրան կցվող փաստաթղթերը կամ չի պահպանվել սույն հոդվածի 11-րդ մասով՝ տրանսպորտային միջոցի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման ներկայացնելու համար սահմանված ժամկետը.

~~2) լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցումը կխախտի այլ անձի՝ օրենքով երաշխավորված իրավունքը.~~

Յ) 2) լիզինգի պայմանագրով վարձակալության հանձնվող տրանսպորտային միջոցի նկատմամբ սույն հոդվածի 13-րդ մասով սահմանված կարգով կիրառվել է արգելադրում:»:

**Հոդված 4.** Օրենքի 13.1 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հոդված 13.1 Տրանսպորտային միջոցների պետական գրանցման եւ պետական հաշվառման տվյալների փոխանցումը (տրամադրումը)*

Ճանապարհային ոստիկանությունում գրանցված կամ հաշվառված (վերահաշվառված) կամ հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները առանց տվյալների սուբյեկտի համաձայնության փոխանցվում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին եւ փաստաբաններին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաեւ պետական կառավարման մարմիններին եւ իրավաբանական անձանց:»:

**Հոդված 5.** Օրենքի 18.2 -րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«Հոդված 18.2. Տրանսպորտային միջոցների շահագործման արգելումը հաշվառման փաստաթուղթը վերցնելով*

1. Սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ժա», «ժբ» կետերով եւ երկրորդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ճանապարհային երթեւեկության անվտանգությունն ապահովող ոստիկանության ծառայողը պարտավոր է արձանագրել խախտումը եւ վերցնել տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը, բացառությամբ այն դեպքի, երբ տեխնիկական զննության կամ հաշվառման կտրոնը գտնվում է վարորդի մոտ: Այդ դեպքում կտրոնը փակցվում է սահմանված տեղում, եւ թույլատրվում է տրանսպորտային միջոցի հետագա շահագործումը:

2. Սույն օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի «ժա» եւ «ժբ» կետերով նախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը վերցնելու դեպքում վարորդին տրվում է 10-օրյա ժամկետով ժամանակավոր փաստաթուղթ՝ տրանսպորտային միջոցի տեխնիկական զննության կտրոնը փակցնելու կամ գործարանային տեսքի բերելու կամ վերասարքավորումն օրինականացնելու համար: Տրանսպորտային միջոցի հաշվառման ժամանակավոր փաստաթղթի ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Տրանսպորտային միջոցների շահագործումը՝ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը վերցնելով արգելելու եւ ժամանակավոր փաստաթուղթ տալու դեպքում, իրավասու պաշտոնատար անձը գրառում է կատարում վարչական իրավախախտման արձանագրության մեջ:

4. Տրանսպորտային միջոցի շահագործումը՝ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթը վերցնելով արգելելու հիմքերը վերացնելուց հետո, հաշվառման փաստաթուղթն անմիջապես վերադարձվում է տրանսպորտային միջոցի վարորդին, սեփականատիրոջը կամ սեփականատիրոջ ներկայացուցչին:»:

**Հոդված 6.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունենալու դեպքում՝ անմիջապես կանգնեցնել եւ (կամ) չտեղաշարժել տրանսպորտային միջոցը, ~~օրենսդրությամբ սահմանված կարգով~~ միացնել վթարային լուսային ազդանշանը, տեղադրել «Վթարային կանգառ» ճանաչման նշանը, չտեղաշարժել

պատահարի հետ կապված առարկաները, առկայության դեպքում՝ նաև դիերը, չփոփոխել ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների՝ միմյանց եւ ճանապարհային ենթակառուցվածքների օբյեկտների նկատմամբ դիրքը, չվնասել եւ չծեւափոխել հետքերը, այնուհետեւ գործել սույն հոդվածի 4-րդ եւ 4.1-ին մասերով սահմանված նորմերի պահանջներով: Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում հետվթարային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է միացված լինեն նաև օգնության համար դեպքի վայրին անմիջապես մոտ կանգնեցված տրանսպորտային միջոցների վթարային լուսային ազդանշանները:».

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում մահացել կամ վիրավորվել են մարդիկ, ապա ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդը պարտավոր է՝

1) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տուժածներին առաջին օգնություն ցույց տալու համար, կանչել «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն եւ ճանապարհատրանսպորտային պատահարի մասին հայտնել ոստիկանություն.

2) ծայրահեղ դեպքերում՝ տուժածներին համընթաց շարժվող տրանսպորտային միջոցով ուղարկել, իսկ եթե դա անհնար է՝ իր տրանսպորտային միջոցով տեղափոխել մոտակա բժշկական կազմակերպություն, այնտեղ հայտնել իր անունը, ազգանունը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը (ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական վկայական եւ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթուղթ) եւ վերադառնալ պատահարի վայր.

3) ձեռնարկել բոլոր հնարավոր իրավաչափ միջոցները ճանապարհային երթեւեկության այլ մասնակիցների կողմից պատահարի վայրի շրջանցումը կազմակերպելու ուղղությամբ.

4) սպասել ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների ներկայանալուն, այնուհետեւ գործել նրանց հրահանգներով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին, 4.2-րդ եւ 4.3-րդ մասերով.

«4.1. Եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում պատճառվել է միայն գույքային վնաս, եւ եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում գույքի վնասման հետ կապված վնասվածքներ հասցնելու հանգամանքները, տրանսպորտային միջոցների տեսանելի վնասների բնույթը եւ ցանկը ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների միջեւ.

1) առաջացնում են տարածայնություններ կամ չեն առաջացնում տարածայնություններ, սակայն ճանապարհատրանսպորտային պատահարի հատկանիշները (պատահարին մասնակից տրանսպորտային միջոցների քանակը եւ (կամ) ակնկալվող հատուցման չափը) չեն համապատասխանում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով տուժողների վնասների հատուցման գործընթացին ներկայացված պայմաններին, ապա ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդը պարտավոր է տեղի ունեցածի մասին հայտնել ոստիկանություն, սպասել ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների ներկայանալուն եւ մինչեւ ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների

ներկայանալը ձեռնարկել բոլոր հնարավոր իրավաչափ միջոցները ճանապարհային երթելեկության այլ մասնակիցների կողմից պատահարի վայրի շրջանցումը կազմակերպելու ուղղությամբ, իսկ ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի ծառայողների պատահարի վայր ներկայանալուց հետո գործել վերջիններիս կողմից տրված հրահանգներով (ցուցումներով)՝ մասնակցելով պատահարի գրանցման եւ անհրաժեշտ ստուգումների անցկացման հետ կապված գործողություններին:

2) չեն առաջացնում տարածայնություններ, ապա ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդները պարտավոր չեն տեղի ունեցածի մասին հայտնել ոստիկանություն եւ կարող են:

ա. ինքնուրույն ձեւակերպել ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ փաստաթղթեր՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով տուժողների վնասների հատուցման գործընթացին ներկայացված պայմաններին համապատասխան եւ թողնել պատահարի վայրը, եթե ճանապարհատրանսպորտային պատահարի հատկանիշները (պատահարին մասնակից տրանսպորտային միջոցների քանակը եւ (կամ) ակնկալվող հատուցման չափը) համապատասխանում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման միջոցով տուժողների վնասների հատուցման գործընթացին ներկայացված պայմաններին:

բ. չձեւակերպել ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ փաստաթղթեր, եթե ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում վնասվել են միայն դրա մասնակիցների տրանսպորտային միջոցները կամ այլ գույքը, եւ մասնակիցներից յուրաքանչյուրի մոտ բացակայում է նշված փաստաթղթերը ձեւակերպելու եւ (կամ) միմյանց նկատմամբ (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունների միջոցով) պահանջներ ներկայացնելու ցանկությունը:

4.2. Սույն հոդվածի 4.1-ին մասի 2-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով նախատեսված դեպքերում վարորդների կողմից նշված պատահարի վերաբերյալ հետագայում ոստիկանությանը դիմում կամ հաղորդում ներկայացնելու դեպքում որեւէ վարույթ չի իրականացվում, եւ դիմումը կամ հաղորդումը թողնվում են անհետեւանք:

4.3. Սույն հոդվածի 4.1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում ոստիկանությունը ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում, ապահովելով ճանապարհային երթելեկության անվտանգությունը, հավաքագրում է ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակիցների, նրանց տրանսպորտային միջոցների եւ պատահարի հանգամանքների վերաբերյալ տվյալներ՝ կազմելով պատահարի մասին եւ պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների մասին արձանագրություններ՝ ամրագրելով (այդ թվում՝ լուսանկարահանման կամ տեսանկարահանման միջոցով) ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող տրանսպորտային միջոցների՝ միմյանց եւ ճանապարհային ենթակառուցվածքների օբյեկտների նկատմամբ դիրքը, հետքերը, առարկաները, տրանսպորտային միջոցների կամ այլ գույքի վնասվածքները: Պատահարի հանգամանքների տեխնիկական

Ելակետային տվյալների մասին արձանագրությունը կարող է չկազմվել, եթե ճանապարհատրանսպորտային պատահարը տեղի է ունեցել ցերեկը՝ օրվա լուսավոր ժամին, բավարար տեսանելության պայմաններում, եւ առկա է դրա տեղի ունենալու պահի եւ դրան անմիջապես հաջորդող՝ պատահարի մասնակիցների գործողությունների տեսագրություն: Պատահարի մասին եւ պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների մասին արձանագրությունները, ինչպես նաեւ տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի հետ կապված ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ կարող է ցանկացած եղանակով տրամադրվել (հասանելի դարձվել) Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյին եւ (կամ) դրա անդամ ապահովագրական ընկերություններին եւ (կամ) երրորդ անձանց՝ ճանապարհատրանսպորտային պատահարի գծով իրականացվող հատուցման գործընթացի կարգավորման ներառյալ փորձաքննությունների իրականացման եւ ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Պատահարի մասին արձանագրության ձեւը եւ դրանում պարունակվող տեղեկատվությունը, ինչպես նաեւ պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների կազմի ու կառուցվածքի նկատմամբ պահանջները հաստատում է ոստիկանության պետը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ:».

4) 5-րդ մասի «ա» կետի 1-ին ենթակետում «տվյալ կարգի» բառերից հետո լրացնել «կամ ենթակարգի» **բառը բառերը**.

5) 5-րդ մասի «գ» կետում «մոտոցիկլով երթելեկելիս» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ մոպեդով կամ հեծանիվով երթելեկելի մասով երթելեկելիս» բառերը.

6) 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենքը լրացնել նոր 24.2 -րդ եւ 24.3-րդ **հոդվածով հոդվածներով**՝ հետեւյալ բովանդակությամբ.

**«Հոդված 24.2. ՀԵԾԱՆՎՈՐՂՆԵՐԻ ԵՎ ՍՈՊԵՂՆԵՐԻ ՎԱՐՈՐՂՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

1. 14 տարեկանից բարձր տարիք ունեցող հեծանվորդների երթելեկությունը պետք է իրականացվի հեծանվային կամ հեծանվահետիոտնային արահետներով կամ հեծանվորդների համար գոտիով:

2. 14-ից բարձր տարիքի հեծանվորդների երթելեկությունը թույլատրվում է՝

1) երթելեկելի մասի աջ եզրով հետեւյալ դեպքերում.

ա. բացակայում են հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով երթելեկելն անհնար է,

բ. հեծանիվի, հեծանվակցորդի կամ տեղափոխվող բեռի եզրաչափային լայնությունը գերազանցում է 1 մ,

գ. հեծանվորդների երթելեկությունն իրականացվում է շարասյան մեջ.

2) կողնակով, եթե բացակայում են հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով կամ երթելեկելի մասի աջ եզրով երթելեկելն անհնար է.

3) մայթով կամ հետիոտնային արահետով հետեւյալ դեպքերում.

ա. բացակայում են հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետները, հեծանվորդների համար գոտին կամ դրանցով կամ երթելեկելի մասի աջ եզրով կամ կողնակով երթելեկելն անհնար է,



բ. հեծանվորդն ուղեկցում է մինչեւ 14 տարեկան հեծանվորդի կամ լրացուցիչ նստատեղին, հեծանվասայլակում կամ հեծանվակցորդում տեղափոխում է մինչեւ 7 տարեկան երեխա:

3. 7-ից մինչեւ 14 տարեկան հեծանվորդների երթեւեկությունը պետք է իրականացվի միայն մայթերով, հետիոտնային, հեծանվային եւ հեծանվահետիոտնային արահետներով, ինչպես նաեւ հետիոտնային գոտիների սահմաններում:

4. Մինչեւ 7 տարեկան հեծանվորդների երթեւեկությունը պետք է իրականացվի միայն մայթերով, հետիոտնային եւ հեծանվահետիոտնային արահետներով (հետիոտների երթեւեկության համար նախատեսված կողմով), ինչպես նաեւ հետիոտնային գոտիների սահմաններում:

5. Երթեւեկի մասի աջ եզրով հեծանվորդների երթեւեկության ժամանակ հեծանվորդները պետք է երթեւեկեն միայն մեկ շարքով:

6. Հեծանվորդների շարասյան երթեւեկությունը երկու շարքով թույլատրվում է, եթե հեծանիվների եզրաչափային լայնությունը չի գերազանցում 0,75 մ:

7. Մեկ շարքով երթեւեկության դեպքում հեծանվորդների շարասյունը պետք է բաժանված լինի խմբերի՝ յուրաքանչյուրում 10-ական հեծանվորդ, իսկ երկու շարքով երթեւեկության դեպքում՝ յուրաքանչյուրում 10-ական զույգ հեծանվորդ: Վազանցը հեշտացնելու համար խմբերի միջեւ տարածությունը պետք է կազմի 80?100 մ:

8. Եթե հեծանվորդի երթեւեկությունը մայթով, հետիոտնային արահետով, կողնակով կամ հետիոտնային գոտիների սահմաններում վտանգում կամ խոչընդոտում է այլ անձանց երթեւեկությունը, հեծանվորդը պարտավոր է իջնել հեծանիվից եւ ղեկավարվել հետիոտների երթեւեկության համար օրենսդրությամբ նախատեսված պահանջներով:

9. Մոպեդների վարորդները պետք է երթեւեկեն երթեւեկի մասի աջ եզրով մեկ շարքով կամ հեծանվորդների համար գոտիով:

10. Մոպեդների վարորդների երթեւեկությունը թույլատրվում է կողնակներով, եթե դա չի խոչընդոտում հետիոտներին:

11. Հեծանվորդներին եւ մոպեդների վարորդներին արգելվում է՝

1) վարել հեծանիվը կամ մոպեդը առանց ղեկը բռնելու,

2) փոխադրել բեռ, որը խանգարում է ղեկավարելուն կամ որը երկարությամբ կամ լայնությամբ ավելի քան 0,5 մ գերազանցում է այդ տրանսպորտային միջոցի եզրաչափը,

3) տեղափոխել ուղեւոր, եթե դա նախատեսված չէ տրանսպորտային միջոցի կառուցվածքով,

4) տեղափոխել մինչեւ 7 տարեկան երեխա՝ նրա համար հատուկ կահավորված նստատեղի բացակայության դեպքում կամ այդ նստատեղից դուրս,

5) կատարել ձախ շրջադարձ կամ հետադարձ տրամվայի երթեւեկությամբ, ինչպես նաեւ տվյալ ուղղությամբ մեկից ավելի երթեւեկության գոտի ունեցող ճանապարհներին,

6) հատել ճանապարհը հետիոտնային անցումներով:

12. Արգելվում է հեծանիվների եւ մոպեդների, ինչպես նաեւ հեծանիվներով եւ մոպեդներով քարշակումը, բացառությամբ հեծանիվի կամ մոպեդի հետ շահագործման համար նախատեսված հեծանվակցորդի կամ կցորդի քարշակման:

13. Խաչմերուկներից դուրս գտնվող հեծանվային արահետի եւ ճանապարհի չկարգավորվող փոխհատման վրա հեծանվորդները եւ մոպեդների վարորդները պետք է զիջեն ճանապարհով երթեւեկող տրանսպորտային միջոցներին:

**Հոդված 24.3. Լծասայլերի (լծասահնակների) երթեւեկության, բեռնակիր եւ հեծկան կենդանիներին, ինչպես նաեւ անասուններին քշելու լրացուցիչ պահանջները**

1. Երթեւեկելի մասով լծասայլ (լծասահնակ) վարել, բեռնակիր կամ հեծկան կենդանիներ կամ անասուններ քշել թույլատրվում է 14 տարեկանը լրացած անձանց:

2. Լծասայլերը (լծասահնակները) պետք է վարել, իսկ բեռնակիր եւ հեծկան կենդանիներին քշել մեկ շարքով, երթեւեկելի մասի եզրով, հնարավորին չափ աջով: Թույլատրվում է շարժվել կողնակներով, եթե դա չի խոչընդոտի հետիոտներին:

3. Լծասայլերի (լծասահնակների), բեռնակիր եւ հեծկան կենդանիների շարասյուները երթեւեկելի մասով շարժվելիս պետք է բաժանված լինեն խմբերի, յուրաքանչյուրում` 10-ական բեռնակիր կամ հեծկան կենդանի կամ 5-ական լծասայլ (լծասահնակ): Խմբերի վազանցումը հեշտացնելու համար դրանց միջեւ հեռավորությունը պետք է լինի 80-100 մ:

4. Լծասայլի (լծասահնակի) վարորդը մերձակա տարածքից կամ երկրորդական ճանապարհից ճանապարհ դուրս գալիս սահմանափակ տեսադաշտով վայրերում կենդանիներին պետք է տանի սանձից բռնած:

5. Կենդանիներին ճանապարհով, որպես կանոն, պետք է քշել օրվա լուսավոր ժամերին` հնարավորին չափ ուղորդելով դեպի ճանապարհի աջ եզրը:

6. Կենդանիներին երկաթուղային գծերն անցկացնելիս դրանք պետք է բաժանվեն այնպիսի քանակությամբ խմբերի, որպեսզի անասնավարների քանակից ելնելով` հնարավոր լինի ապահովել յուրաքանչյուր խմբի անվտանգ անցումը:

7. Լծասայլերի (լծասահնակների) վարորդներին, բեռնակիր, հեծկան կենդանիներ եւ անասուններ քշողներին արգելվում է`

1) կենդանիներին թողնել ճանապարհին առանց հսկողության,

2) կենդանիներին քշել երկաթուղային գծերով եւ ճանապարհներով` դրա համար նախատեսված տեղերից դուրս, ինչպես նաեւ օրվա մութ ժամանակ եւ անբավարար տեսանելիության պայմաններում (բացի տարբեր մակարդակների վրա անասուններին երկաթուղային գծերը կամ ճանապարհն անցկացնելուց),

3) այլ ուղիների առկայության դեպքում կենդանիներին քշել ասֆալտբետոնե եւ ցեմենտբետոնե ծածկույթով ճանապարհներով,

4) կենդանիներին արածեցնել ճանապարհի կանաչապատված բաժանարար գոտում, ճանապարհին 100 մ մոտ տարածքներում, ինչպես նաեւ դրանց կուտակել երթեւեկելի մասերում եւ մայթերին:

8. Արգելվում է վարել լծասայլ, եթե այն`

1) կահավորված չէ կառուցվածքով նախատեսված կայանման արգելակով եւ հակազդորման հենակներով.

2) առջեւի մասում չունի սպիտակ գույնի երկու լուսանդրադարձիչներ կամ լապտերներ (օրվա մութ ժամանակ կամ անբավարար տեսանելիության պայմաններում երթելու համար).

3) հետեւի մասում չունի կարմիր գույնի երկու լուսանդրադարձիչներ կամ լապտերներ:»:

**Հոդված 8.** Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) «AM» ենթակարգ՝ մոպեդներ եւ դրանց համարժեք տեխնիկական բնութագրեր ունեցող քվադրիցիկներ.».».».».

2) 1-ին մասը լրացնել նոր 1.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) «A1» ենթակարգ՝ ոչ ավելի, քան 125 խորանարդ սմ աշխատանքային ծավալով եւ ոչ ավելի, քան 11 կՎտ (կամ 15 ձիաուժ) առավելագույն հզորությամբ շարժիչով մոտոցիկլեր (թեթեւ մոտոցիկլեր).».».».

3) 1-ին մասի 2-րդ կետում ««A1» ենթակարգին» բառերը փոխարինել ««AM» եւ «A1» ենթակարգերին» բառերով.

4) 1-ին մասի 3-րդ կետում «քվադրոցիկլեր» բառը փոխարինել «քվադրիցիկլեր» բառով.

5) 3-րդ մասի 1-ին ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) «AM» ենթակարգի՝ 16 տարին լրացած անձանց, իսկ «A», «B» եւ «C» կարգերի ու «A1», «B1» եւ «C1» ենթակարգերի՝ 18 տարին լրացած անձանց.».».».

6) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

7) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Հայաստանի Հանրապետությունում գործում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանող ազգային եւ միջազգային վարորդական վկայականներ, ընդ որում՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված միջազգային վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության տարածքում տրանսպորտային միջոցներ վարելու համար համարվում են չգործող:».

8) 7-րդ մասում «A1» բառից առաջ լրացնել «AM,» բառը.

9) լրացնել նոր 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ եւ 19-րդ մասերով հետեւյալ բովանդակությամբ.

«10. «A» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «AM» եւ «A1» ենթակարգի, ինչպես նաեւ մոտոցիկլային նստատեղ կամ ղեկ ունեցող «B1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «B» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «B1» ենթակարգի (բացառությամբ մոտոցիկլային նստատեղ կամ ղեկ ունեցող տրանսպորտային միջոցների) տրանսպորտային միջոցներ, «C» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «C1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «D» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք

վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «D1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «CE» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «C1E» ենթակարգի տրանսպորտային միջոցներ, «DE» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք վերապահող՝ Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայականն իրավունք է վերապահում վարել նաեւ «D1E» ենթակարգի տրանսպորտային միջոցներ:

11. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված (այդ թվում՝ այլ պետություններում փոխանակված), ինչպես նաեւ ԽՍՀՄ պետությունների իրավասու մարմինների կողմից մինչեւ 1992 թվականի փետրվարի 21-ը տրված վարորդական վկայականը կորցնելու, ինչպես նաեւ փոխանակման դեպքերում դրա տնօրինողին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նույն կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի նոր վարորդական վկայական է տրվում առանց որակավորման քննություններ հանձնելու:

12. Հայաստանի Հանրապետության՝ Երկքաղաքացի հանդիսացող քաղաքացիների՝ այլ երկրներում ստացած եւ Վիեննայի 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայով եւ դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականների հիման վրա Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայական տրվում է առանց որակավորման քննություններ հանձնելու:

13. Այլ պետություններում ստացած եւ Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայով եւ դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականը փոխանակվում է առանց որակավորման քննություններ հանձնելու:

14. Կորցրած կամ գողացված օտարերկրյա (բացառությամբ ԽՍՀՄ պետությունների իրավասու մարմինների կողմից մինչեւ 1992 թվականի փետրվարի 21-ը տրված) ազգային եւ միջազգային վարորդական վկայականի փոխարեն Հայաստանի Հանրապետության ազգային եւ միջազգային վարորդական վկայականների հատկացում չի կատարվում:

15. Այլ պետություններում ստացած եւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին չհամապատասխանող ազգային եւ միջազգային վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության ազգային եւ միջազգային վարորդական վկայականներով չեն փոխանակվում եւ կորած վարորդական վկայականի կրկնօրինակ չի տրվում:

16. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց Հայաստանի Հանրապետության տարածքում միջազգային վարորդական վկայականով թույլատրվում է վարել տրանսպորտային միջոցներ միայն ազգային վարորդական վկայականի առկայության դեպքում:

17. Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցներ վարելու հետ անմիջականորեն կապված ձեռնարկատիրական եւ (կամ) աշխատանքային գործունեություն ծավալել օտարերկրյա ազգային կամ միջազգային վարորդական վկայականներով, բացառությամբ միջազգային փոխադրումներ իրականացնելու դեպքերի: Սույն մասով նախատեսված արգելքը փոխադարձության

սկզբունքով չի կիրառվում Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների քաղաքացիների նկատմամբ:

18. Այլ երկրում, որը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հետ համատեղ ճանապարհային երթուղիների անվտանգության ապահովման ոլորտում միջազգային պայմանագրերի մասնակից, տրված ազգային վարորդական վկայականը փոխադարձության պայմանով համարվում է գործող Հայաստանի Հանրապետության տարածքում տրանսպորտային միջոց վարելու համար միայն այն դեպքում, եթե այն ներկայացվում է սահմանված նոտարական կարգով հաստատված հայերեն լեզվով թարգմանությունով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վարորդական վկայականի բոլոր գրառումները կատարված են կամ կրկնօրինակված են լատիներեն այբուբենի տառերի նման:

19. Օտարերկրյա ազգային եւ միջազգային վարորդական վկայականները Հայաստանի Հանրապետության տարածքում տրանսպորտային միջոցներ վարելու համար համարվում են գործող նշված վարորդական վկայականների համապատասխան կարգերի եւ ենթակարգերի տրանսպորտային միջոցների համար՝ տիրապետողների տարիքը սույն հոդվածով սահմանված տարիքը լրանալու պահից:»:

*Հոդված 9. Օրենքի 28-րդ հոդվածում՝*

1) 1.2-րդ մասում «A1» բառից առաջ լրացնել «AM,» բառը.

2) լրացնել նոր՝ 1.3-րդ, 1.4-րդ, 1.5-րդ, 1.6-րդ, 1.7-րդ և 1.8-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«1.3. «A», «B» և «BE» կարգերի, ինչպես նաև «AM», «A1» և «B1» ենթակարգերի վարորդական իրավունքի վկայական ստանալու համար (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) դիմած անձը պետք է անցնի բժշկական հավատարմագրում, եթե.

ա) վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացն իրականացնելու ընթացքում ակնհայտ երևում է, որ նա կարող է ունենալ սույն օրենքի 22.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված տրանսպորտային միջոց շահագործելու համար խոչընդոտ հանդիսացող հակացուցում, զուցում կամ սահմանափակում (բացակայում են վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթաթը, կամ առկա են շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆայանգների ձևախախտումներ և արատներ, պարանոցի կամ մեջքի խնդիրներ, տեսողության ակնհայտ խանգարումներ կամ աչքի բացակայություն, լսողության ակնհայտ խանգարումներ).

բ) առողջական վիճակի վերաբերյալ լրացված հայտարարագրում առկա է նշում տրանսպորտային միջոց վարելուն խոչընդոտող առողջական վիճակի մասին:

1.4. Սույն հոդվածի 1.3 մասի [ա] և «բ» կետերով նախատեսված դեպքերում վարորդական իրավունքի վկայական ստանալու համար դիմած անձին ճանապարհային ոստիկանության կողմից բժշկական հավատարմագրման պահանջագիրը տրվում է վարորդական իրավունքի վկայական ստանալու (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) մասին դիմումը ներկայացնելու պահին:

1.5. Բժշկական հավատարմագրման պահանջագրի և առողջական վիճակի վերաբերյալ հայտարարագրի ձևերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

1.6. «C», «D», «T» և «CE», «DE» կարգերի, «C1», «D1» և «C1E», «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական իրավունքի վկայական առաջին անգամ ստանալու

համար դիմող անձիք պետք է ճանապարհային ոստիկանություն ներկայացնեն բժշկական հավատարմագրում անցած լինելու մասին տեղեկանք:

1.7. «C», «D», «T» և «CE», «DE» կարգերի, «C1», «D1» և «C1E», «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար դիմած անձը պետք է անցնի բժշկական հավատարմագրում, եթե վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացն իրականացնելու ընթացքում ակնհայտ երևում է, որ նա կարող է ունենալ սույն օրենքի 22.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տրանսպորտային միջոց շահագործելու համար խոչընդոտ հանդիսացող հակացուցում, ցուցում կամ սահմանափակում (ծեռքերի, ոտքերի, ձեռքի մատների շարժումների սահմանափակում կամ ձևախեղումներ կամ դրանց բացակայություն, պարանոցի կամ մեջքի խնդիրներ, տեսողության ակնհայտ խանգարումներ կամ աչքի բացակայություն, լսողության ակնհայտ խանգարումներ) կամ առողջական վիճակի վերաբերյալ լրացված հայտարարագրում առկա է նշում տրանսպորտային միջոց վարելուն խոչընդոտող առողջական վիճակի մասին:

1.8. Տրանսպորտային միջոց վարելուն խոչընդոտող առողջական խնդիրներ ունեցող, թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման ենթակա, ինչպես նաև հոգեբուժական կազմակերպություններում հաշվառված անձանց անձնական տվյալները մշակվում են էլեկտրոնային եղանակով և վարորդական վկայական ստանալու (վարորդական վկայականը փոխանակելու կամ կորած վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու) մասին դիմում ներկայացվելու պահին էլեկտրոնային հարցման դեպքում առողջապահության բնագավառի լիազոր մարմնի միասնական էլեկտրոնային շտեմարանի միջոցով հասանելի են դառնում ճանապարհային ոստիկանությանը:»

2) 3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վարորդի թեկնածու կարող է դառնալ 17 տարին լրացած անձը, բացառությամբ «AM» ենթակարգի տրանսպորտային միջոցի վարորդի թեկնածուի: «AM» ենթակարգի տրանսպորտային միջոցի վարորդի թեկնածու կարող է դառնալ 16 տարին լրացած անձը:».

3) 4) 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործնական վարման ուսուցումը կարող է իրականացվել այն ճանապարհներին, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից արգելված չէ դրա իրականացումը:»:

Հոդված 10. Օրենքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 29. Վարելու իրավունքը դադարելը եւ վարորդական վկայականի ուժը կորցնելը

1. Անձի վարելու իրավունքը դադարում է, եթե`

ա) առկա է նրան անգործունակ ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռ.

բ) առկա է նրա հոգեկան, թմրամիջոցների և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ պայմանավորված հիվանդության վերաբերյալ եւ (կամ) առողջական վիճակը օրենսդրությամբ սահմանված պայմաններին չհամապատասխանելու մասին իրավասու մարմնի եզրակացություն.

գ) առկա է վարելու իրավունքից զրկելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտ կամ իրավասու այլ մարմնի ~~անբողոքարկելի դարձած որոշում ուժի մեջ մտած ակտ.~~

դ) նա մահացել է:

2. Անձի վարորդական վկայականն ուժը կորցնում է, եթե`

ա) առկա է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որեւէ մեկը.

բ) լրացել է վարորդական վկայականի գործողության ժամկետը.

գ) վարորդական վկայականը կորել է, եւ անձը դիմել է ~~սահմանված կարգով~~ նոր վկայական ստանալու համար կամ իրազեկել է կորստյան մասին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» եւ «բ» կետերով նախատեսված հիմքերով ուժը կորցրած վարորդական վկայական հայտնաբերելու դեպքում ոստիկանությունը վերցնում է այդ վարորդական վկայականը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի «ա», «բ» եւ «գ» կետերով նախատեսված հիմքերով դադարեցված վարելու իրավունքը վերականգնվում է վարելու իրավունքը դադարելու հիմքը վերանալուց հետո՝ որակավորման քննությունները հանձնելուց հետո:»:

**Հոդված 11.** Օրենքի 33.1-ին հոդվածի 2-րդ մասի «ժա» կետը «տրանսպորտային միջոցների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցների խոտանված հաշվառման համարանիշերի վահանակների» բառերով:

**Հոդված 12.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ և 8-րդ կետերը, 9-րդ կետը՝ նոր 10-րդ մաս լրացնելու մասով, 8-րդ, 9-րդ (միայն նոր լրացվող 10-րդ մասի հետ կապված) կետերը, 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 2-րդ 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 1.8-րդ մասով սահմանված էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքներն ավարտին են հասցվում մինչև 2021 թվականի հունիսի 1-ը:

4. Մինչև սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 1.8-րդ մասով սահմանված էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքների ավարտը, վարորդական իրավունքի վկայական ստանալու համար (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) դիմած անձի կողմից ներկայացված առողջական վիճակի վերաբերյալ հայտարարագրում առողջական խնդիրներ չունենալու մասին նշումն ընդունվում է որպես հիմք և վարորդական իրավունքի վկայականի հատակագումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ ծեռքերի, ոտքերի, ծեռքի մատների շարժումների սահմանափակումների կամ ձևախեղումների կամ դրանց բացակայության, պարանոցի կամ մեջքի խնդիրների, տեսողության ակնհայտ խանգարումների կամ աչքի բացակայության, լսողության ակնհայտ խանգարումների):

**3. 5.** Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4 ամսվա ընթացքում

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-169-03.06.2019-ՊԱ-011/1) ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Հոդված 8. (օրենքի 27-րդ հոդվածի 17-րդ մաս)	<p>Նախագծի 8-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 27-րդ հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ «Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցներ վարելու հետ անմիջականորեն կապված ձեռնարկատիրական եւ (կամ) աշխատանքային գործունեություն ծավալել օտարերկրյա ազգային կամ միջազգային վարորդական վկայականներով, բացառությամբ միջազգային փոխադրումների իրականացնելու դեպքերի: Սույն մասով նախատեսված արգելքը փոխադարձության սկզբունքով չի կիրառվում Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների քաղաքացիների նկատմամբ: »:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռուսական վարորդական իրավունքով Հայաստանի Հանրապետությունում աշխատում են հայազգի վարորդները, նշանակում է, որ այս նորմը, ընդունվելու պարագայում, առաջնահերթ հարվածի տակ է դնելու նրանց շահերը, ինչն ընդհանրապես անթույլատրելի է և չի ենթարկվում տրամաբանական հիմնավորման:</p> <p>Ըստ այդմ, առաջարկում ենք վերախմբագրել նշված կետն այնպես, որ դրա գործողությունը չտարածվի ռուսական վարորդականով Հայաստանում գործունեություն ծավալող հայազգի</p>	<p>Չի ընդունվել հետևյալ հիմնավորումներով՝</p> <p>1. Ազգության հիմքով նման բացառություն սահմանելը կդիտարկվի որպես խտրականություն, քանի որ այն չի բխում ՀՀ միջազգային պարտավորություններից և ՀՀ Սահմանադրությունից:</p> <p>2. Վարորդական վկայականները, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերը անձի ազգության վերաբերյալ հստակ տեղեկատվություն չեն պարունակում:</p> <p>3. Բացի այդ, ըստ ներկայացված նախագծի 8-րդ հոդվածով օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 27-րդ հոդվածի 13-րդ մասի՝</p>	<p>Չի ընդունվել</p>



			<p>վարորդների վրա կամ առհասարակ հանել այդ կետը նախագծերի փաթեթից:</p>	<p>Այլ պետություններում ստացած եւ Վիեննայի 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթուղիների մասին» կոնվենցիայով եւ դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականը փոխանակվում է առանց որակավորման քննություններ հանձնելու : Այսինքն՝ ՌԴ քաղաքացի հանդիսացող անձը ՌԴ-ի կողմից տրված վարորդական վկայականը, որը լիովին համապատասխանում է հիշյալ միջազգային պայմանագրով սահմանված պահանջներին, ցանկացած պահի ՀՀ-ում կարող է փոխանակել ազգային վարորդական վկայականով՝ առանց որակավորման քննություններ հանձնելու:</p>	
--	--	--	---	--	--

2.	<p>ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն Գևորգ Գորգիսյան</p>	<p>Հոդված 1. (օրենքի 2-րդ հոդվածի «ավտոմոբիլ» հասկացություն)</p>	<p>Ավտոմոբիլ հասկացության մեջ, որպես ավտոմոբիլի տեսակ, ներառել նաև ավտոգնացքը:</p>	<p>Չի ընդունվել: «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի համաձայն <b>ավտոգնացքը</b> դա կցորդի (կիսակցորդի) հետ կցված <u>մեխանիկական տրանսպորտային միջոցն</u> է, իսկ <b>մեխանիկական տրանսպորտային միջոցը՝</b> շարժիչով շարժման մեջ դրվող տրանսպորտային միջոցը, <u>ներառյալ՝ տրակտորները, ինքնագնաց մեքենաները</u> և <u>մեխանիզմները</u>, ինչպես նաև տրոլեյբուսները և էլեկտրամոբիլները. Հետևաբար, ավտոգնացքը չի կարող հանդիսանալ ավտոմոբիլ, քանի որ այն կարող է կազմված լինել ոչ միայն բեռնատար ավտոմոբիլից և կցորդից, այլ նաև՝ տրակտորից և կցորդից, իսկ տրակտորը ավտոմոբիլ չի հանդիսանում:</p>	<p>Չի ընդունվել</p>
----	--	--	--	--	---------------------

3.	ՀՀ կառավարություն	Հոդված 10. (օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ, 2-րդ մասի «գ» կետ )	<p>Նախագծի 10-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում առաջարկվում է «անբողոքարկելի դարձած» բառերը փոխարինել «ուժի մեջ մտած» բառերով, քանի որ վարչական ակտի կատարումը պետք է պայմանավորվի դրա ուժի մեջ մտնելու հանգամանքով: Ինչ վերաբերում է անբողոքարկելի դառնալը, որպես վարչական ակտի կատարման պայման նախատեսելուն, ապա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով այն սահմանված է միայն դրամական պահանջների կատարման մասով (հոդված 88): Բացի դրանից, վարելու իրավունքը դադարելը ակտի անբողոքարկելիության հետ կապելու պարագայում արհեստականորեն կհետաձգվի երթևեկության համար պոտենցիալ վտանգ ներկայացնող վարորդին երթևեկությունից մեկուսացնելու գործընթացը:</p> <p>Միաժամանակ, նույն կետում «որոշում» բառն անհրաժեշտ է փոխարինել «ակտ» բառով՝ նկատի ունենալով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջները:</p> <p>Նախագծի 10-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 29-րդ հոդվածի 2-րդ մասի գ/ կետից հանել «սահմանված կարգով» բառերը:</p>	Առաջարկությունն ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակեցնել, թե «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին ենթակետում որ բառերից հետո է առաջարկվում լրացումը:	Առաջարկն ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է լրացում:	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված 1-ին կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում «հասարակ գրավոր գործարքի կատարումը և դրա հիման վրա» բառերն անհրաժեշտ է փոխարինել « հասարակ գրավոր գործարքի կատարումը և դրանից ծագող» բառերով, իսկ «սեփականության իրավունքի	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			գրանցումը» և «վարձակալության իրավունքի գրանցումը» բառերը՝ «սեփականության իրավունքի <b>պետական</b> գրանցումը» և «վարձակալության իրավունքի <b>պետական</b> գրանցումը» բառերով:		
6.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված 2-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին կետում «9-րդ հոդվածի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «1-ին մասի» բառերով: Միաժամանակ, նախագծի քննարկվող մասի 8-րդ կետում «տրանսպորտային միջոցի պետական գրանցումը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «տրանսպորտային միջոցի <b>նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը</b> » բառերով:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	3-րդ հոդված 4-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ մասի 2-րդ կետը առաջարկվում է հանել, քանի որ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցմամբ այլ անձանց՝ օրենքով երաշխավորված որևէ իրավունք չի կարող խախտվել:	Առաջարկն ընդունվել է: 12-րդ մասի 2-րդ կետը հանվել է:	Ընդունվել է
8.	ՀՀ կառավարություն	6-րդ հոդված , 1-ին և 4-րդ կետեր	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետից հանել «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը, իսկ 4-րդ կետում «բառը» բառը փոխարինել «բառերը» բառով:	Առաջարկներն ընդունվել են: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածում «հոդվածով» բառն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածներով» բառով:	Ընդունվել է: «հոդվածով» բառը փոխարինվել է «հոդվածներով» բառով:	Ընդունվել է
10.	ՀՀ կառավարություն	8-րդ հոդված , 9-րդ կետ	8-րդ հոդվածի 9-րդ կետով լրացվող 11-րդ մասում «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ լրացվող 18-րդ մասով նախատեսված «սահմանված կարգով» բառերը փոխարինել «նոտարական կարգով» բառերով:	Առաջարկներն ընդունվել են: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

11.	ՀՀ կառավարություն	12-րդ հոդված , 2-րդ մաս	8. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է խմբագրել «(միայն նոր լրացվող 10-րդ մասի հետ կապված) կետերը» բառերը:	Առաջարկն ընդունվել է: Դրույթը խմբագրվել է:	Ընդունվել է
12.	ՀՀ կառավարություն	9-րդ հոդված	<p>Վարորդական վկայականի տրամադրման գործընթացը Եվրոպական պառլամենտի ու Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 2006/126/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է օրինագծով սահմանել վարորդի թեկնածուների կողմից բժշկական հավատարմագրում անցնելու դեպքերը: Մասնավորապես՝ ԱԲ և ԲԲ կարգերի, ինչպես նաև ԱՄԸ, Ա1Ը և Բ1Ը ենթակարգերի համար դիմած անձը պետք է անցնի բժշկական հավատարմագրում, եթե վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացն իրականացնելու ընթացքում ակնհայտ երևում է, որ նա կարող է ունենալ տրանսպորտային միջոց շահագործելու համար խոչընդոտ հանդիսացող հակացուցում, ցուցում կամ սահմանափակում կամ եթե անձը նշում է կատարել հայտարարագրում առողջական խնդիր ունենալու մասին, որը խոչընդոտ է տրանսպորտային միջոց վարելու համար:</p> <p>Որպես տրանսպորտային միջոց շահագործելու համար խոչընդոտ հանդիսացող ակնհայտ հակացուցում, ցուցում կամ սահմանափակում հասկացություններ՝ օրինագիծը դիտարկում է ստորին կամ վերին վերջույթի, դաստակի կամ ոտնաթաթի բացակայությունը, շարժումները սահմանափակող դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտումները, ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումները և արատները, պարանոցի կամ մեջքի խնդիրները, տեսողության ակնհայտ խանգարումները կամ աչքի բացակայությունը, լսողության ակնհայտ խանգարումները:</p> <p>ԸԸ, ԸԹ, ԸՄ, ԸԵԸ և ԸԵԸ կարգերի, և</p>	Ընդունվել է: Օրինագծի 9-րդ հոդվածում լրացվել է նոր 2-րդ կետ: Օրինագծի անցումային դրույթներում սահմանվել է, որ նշված դրույթներն ուժի մեջ են մտնելու 6 ամիս հետո:	Ընդունվել է

			<p>«Ը1Ե», «Ը1Ե» ենթակարգերի դեպքում բժշկական հավատարմագրում անցնում են առաջին անգամ դիմած բոլոր թեկնածուները: Թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման ենթակա, ինչպես նաև հոգեբուժական կազմակերպություններում հաշվառված անձանց անձնական տվյալները պետք է մշակվեն էլեկտրոնային եղանակով և էլեկտրոնային հարցման դեպքում առողջապահության բնագավառի լիազոր մարմնի միասնական էլեկտրոնային շտեմարանի միջոցով հասանելի դառնան Ճանապարհային ոստիկանությանը: Ընդ որում նշված դրույթները պետք է ուժի մեջ մտնեն սույն օրենքի ընդունումից 6 ամիս հետո:</p>		
13.	«« կառավարություն	10-րդ հոդված	<p>Անձի վարելու իրավունքը դադարելու հիմքերում հոգեկան հիվանդության վերաբերյալ եզրակացության առկայությունից բացի լրացնել նաև թմրամիջոցների և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ պայմանավորված հիվանդության վերաբերյալ իրավասու մարմնի եզրակացությունը.</p>	<p>Ընդունվել է: 10-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:</p>	Ընդունվել է
14.	«« կառավարություն	12-րդ հոդված	<p>Անցումային դրույթներում սահմանված էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքների ավարտման ժամկետ սահմանել մինչև 2021 թվականի հունիսի 1-ը: Միաժամանակ, սահմանել, որ մինչև էլեկտրոնային շտեմարանի ձևավորման աշխատանքների ավարտը, վարորդական իրավունքի վկայական ստանալու համար (այդ թվում՝ վարորդական վկայականը փոխանակելու կամ վարորդական վկայականի կրկնօրինակ ստանալու համար) դիմած անձի կողմից ներկայացված առողջական վիճակի վերաբերյալ հայտարարագրում առողջական խնդիրներ չունենալու մասին նշումն ընդունվում է որպես հիմք և վարորդական իրավունքի վկայականի հատակացումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ ձեռքերի, ոտքերի, ձեռքի մատների շարժումների սահմանափակումների կամ ձևախեղումների</p>	<p>Առաջարկներն ընդունվել են: Անցումային դրույթները լրացվել են նոր՝ 3-րդ և 4-րդ մասերով:</p>	Ընդունվել է

			կամ դրանց բացակայության, պարանոցի կամ մեջքի խնդիրների, տեսողության ակնհայտ խանգարումների կամ աչքի բացակայության, լսողության ակնհայտ խանգարումների):		
--	--	--	---	--	--